ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2025 թվականի N 0617-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի արձանագրությունն այն մասին, որ ԱՔ-ԳՀԱՊՁԲ-25/11 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու մասին, իսկ սահմանված ժամկետում «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել շտկված փաստաթղթերը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ԱՔ-ԳՀԱՊՁԲ-25/11 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ-ն, գործունեության հասցեն և մասնակցին վերաբերող այլ տվյալներ բացակայում են) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մայիսի 13
ք. Արմավիր